ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«12» հոկտեմբերի 2017 թվականի № 125-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության համակարգի ոչ առևտրային կազմակերպություններում (այսուհետ՝ ՊՈԱԿ) և պետությանը սեփականության իրավունքով պատկանող հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերություններում՝ (այսուհետ՝ Ընկերություններ) գնումների գործընթացը գործող օրենսդրության պահանջներին համապատասխան և կանոնակարգված իրականացնելու նպատակով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի <<Ներքին աուդիտի կանոնակարգի օրինակելի ձևը և դրա կազմման կարգի առանձնահատկությունները հաստատելու մասին>> N 1096-Ն հրամանով հաստատված հավելվածի 15-րդ կետի պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ընկերությունների և ՊՈԱԿ-ի կողմից հաստատված գնումների պլանները, ինչպես նաև դրանում կատարվող լրացումներն ու փոփոխությունները հաստատվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին (այսուհետ՝ Բաժին): Տեղեկատվության էլեկտրոնային տարբերակն ուղարկել

ktorosyan@minenergy.am կամ torosyank@mail.ru հասցեներին՝ Excel ֆորմատով <<աղյուսակ 1>> ձևաչափով (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարի թիվ 177-Ն հրամանի կատարումն ապահովելու նպատակով Ընկերություններին և ՊՈԱԿ-ին գնումների կազմակերպման մասով նախատեսել, որ գնումների համակարգողը գնման ընթացակարգի արձանագրությունը հաստատվելուն, իսկ պատասխանատու ստորաբաժանումը հանձնման-ընդունման արձանագրությունը, իսկ ապրանքների դեպքում նաև պահեստ մուտքագրման օրդերի պատճենները կազմելուն հաջորդող աշխատանքային օրը գրավոր տրամադրել Նախարարության Բաժնին: Տեղեկատվությունն ուղարկել ktorosyan@minenergy.am կամ torosyank@mail.ru հասցեներին:

3. Ընկերություններին և ՊՈԱԿ-ին՝

   ա. 2017 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի վերաբերյալ մինչև սույն թվականի նոյեմբերի 15-ը ներառյալ Նախարարության Բաժնին ներկայացնել նախորդ եռամսյակում փաստացի կատարված գնումների վերաբերյալ թղթային տեղեկատվություն (ստորագրված և կնքված ընկերության տնօրենի և գնումները համակարգողի կողմից): Տեղեկատվության էլեկտրոնային տարբերակն ուղարկել ktorosyan@minenergy.am կամ torosyank@mail.ru հասցեներին՝ Excel ֆորմատով <աղյուսակ 1> ձևաչափով (կցվում է):

   բ. 2018 թվականի հունվարի 1-ից սկսած յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 15-ը Նախարարության Բաժնին ներկայացնել նախորդ եռամսյակում փաստացի կատարված գնումների վերաբերյալ թղթային տեղեկատվություն (ստորագրված և կնքված ընկերության տնօրենի և գնումները համակարգողի կողմից): Տեղեկատվության էլեկտրոնային տարբերակն ուղարկել ktorosyan@minenergy.am կամ torosyank@mail.ru հասցեներին՝ Excel ֆորմատով <աղյուսակ 1> ձևաչափով (կցվում է):

4. Սույն հրամանի 1-ին, 2-րդ կետերի և 3-րդ կետի <<բ>> ենթակետի պահանջների կատարումն ապահովել 2018 թվականի հունվարի 1-ից:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ